

**Երրորդ երկրներից՝ անմիջականորեն բուսասանիտարական վտանգ ներկայացնող ապրանք կամ վնասակար օրգանիզմ պարունակող բեռան մուտքի միջամտության մասին ծանուցման ընթացակարգ հիմնադրող՝ Հանձնաժողովի 1994 թվականի հունվարի 21-ի 94/3/ԵՀ հրահանգ**

*Պաշտոնական տեղեկագիր, L 032, 05.02.1994թ., էջ 0037 - 0040*

Ֆիններեն հատուկ հրատարակություն. Գլուխ 3, հատոր 56, էջ 0025

Շվեդերեն հատուկ հրատարակություն. Գլուխ 3, հատոր 56, էջ 0025

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով «Բույսերի կամ բուսական արտադրատեսակների համար վնասակար օրգանիզմները անդամ պետություններ ներմուծելու եւ Համայնքում դրանք տարածելու դեմ պաշտպանիչ միջոցների մասին» Հանձնաժողովի 93/110/ԵՏՀ (2) հրահանգով վերջին անգամ փոփոխված՝ Խորհրդի 1976 թվականի դեկտեմբերի 21-ի 77/93/ԵՏՀ հրահանգը (1) եւ, մասնավորապես, դրա 15(4) հոդվածը,

քանի որ երրորդ երկրներից՝ անկախ վերջիններիս թվարկումից 77/93/ԵՏՀ հրահանգի V հավելվածի Բ մասում, փոխադրվող բույսեր, բուսական ծագում ունեցող արտադրատեսակներ կամ այլ նյութեր կամ մեկուսացված վնասակար օրգանիզմներ պարունակող ապրանքների դեպքում, որոնցում ենթադրաբար առկա է վնասակար օրգանիզմների ներթափանցման կամ տարածման անմիջական վտանգ՝ անկախ դրանց թվարկումից այդ Հրահանգի I եւ II հավելվածներում, տվյալ անդամ պետությունը տեղեկացնում է Հանձնաժողովին եւ մյուս անդամ պետություններին Համայնքին վտանգից պաշտպանելուն ուղղված ձեռնարկված միջոցների մասին,

քանի որ այդ տեղեկատվությունն անհրաժեշտ է մի կողմից՝ օգնելու Հանձնաժողովին ներթափանցման մասշտաբները եւ դրանցից բխող

վտանգները գնահատելու եւ, անհրաժեշտության դեպքում, տվյալ անդամ պետության հետ համագործակցելով, հնարավորինս արագ պաշտպանությանը կամ վերացմանն ուղղված միջոցներ նախատեսելու հարցում, եւ մյուս կողմից՝ օգնելու մյուս անդամ պետություններին այդ վտանգին դիմակայելու հարցում,

քանի որ այդ նպատակով Հանձնաժողովը, համաձայն նշված հրահանգի 19ա (6) հոդվածի առաջին պարբերության, պետք է ցանց հիմնադրի՝ վնասակար օրգանիզմների առաջացման նոր դեպքերի մասին տեղեկացնելու նպատակով,

քանի որ կարելի է, որ դեպի Համայնք բոլոր համապատասխան մուտքի կետերը, որոնք ենթակա են ներթափանցման ազդեցությանը, ինչպես նաեւ Հանձնաժողովը, անհապաղ տեղեկացվեն դեպի Համայնք մուտքի կետում բույսեր, բուսական ծագում ունեցող արտադրանք կամ այլ պարագաներ պարունակող բեռան մուտքին միջամտելու մասին, որում առկա է վնասակար օրգանիզմների ներթափանցման կամ տարածման անմիջական վտանգ,

քանի որ յուրաքանչյուր անդամ պետության միասնական կենտրոնական մարմին կոչված է կանոնակարգելու բույսերի առողջության հետ կապված հարցերը՝ համաձայն 77/93/ԵՏՀ հրահանգի,

քանի որ նման կանոնակարգումն ընդգրկում է միջամտության մասին անդամ պետությունների շրջանում ծանուցումներ տարածելը, ինչպես նաեւ այդպիսի ծանուցումներ ուղարկելը բոլոր համապատասխան մուտքային կետերին այն անդամ պետության տարածքում, որտեղ միջամտությունը կարող է վնասակար ազդեցություն ունենալ,

քանի որ միջամտության ծանուցման համար նպատակահարմար է ստեղծել անդամ պետությունների համապատասխան ստորաբաժանումների կողմից օգտագործման ենթակա համայնքային ձեւաթղթի ստանդարտ տպագիր օրինակ,

քանի որ այդ համակարգի արդյունավետ գործունեությունը պահանջում է տեղեկատվական ցանցի հիմնադրում նշված ձեւաթղթերում պարունակվող տեղեկությունների օգտագործման եւ մշակման նպատակով,

քանի որ համակարգի կառավարումը թույլ է տալիս օգտագործել միջամտության մասին ծանուցումների ձեւաթղթերում պարունակվող որոշակի տեղեկությունները վերջին անգամ 1988 թվականի սեպտեմբերի 21-ին փոփոխված 1951 թվականի ապրիլի 18-ին Փարիզում կնքված Բույսերի պաշտպանության եվրոպական եւ միջերկրածովյան կազմակերպություն հիմնադրելու մասին կոնվենցիայի նպատակով,

քանի որ սույն Հրահանգով նախատեսված միջոցները համապատասխանում են Բույսերի առողջության հարցերով մշտական հանձնաժողովի կարծիքին,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

### **Հոդված 1**

Սույն Հրահանգի իմաստով «միջամտություն» նշանակում է անդամ պետության կողմից 77/93/ԵՏՀ հրահանգի 12 (8) հոդվածի համաձայն ձեռնարկված կամ ձեռնարկվելիք ցանկացած գործողություն երրորդ երկրից բույսեր, բուսական արտադրանք կամ այլ պարագաներ պարունակող ամբողջ բեռան կամ դրա որոշակի հատվածի առումով կամ բույսերի կամ բուսական արտադրանքի համար վնասակար օրգանիզմի մասով, որը չի համապատասխանում այդ Հրահանգի դրույթներին,

### **Հոդված 2**

1. Անդամ պետություններն ապահովում են, որ միջամտության դեպքում համապատասխան ծանուցումն ուղարկվի ներքոհիշյալ մարմիններին ոչ ուշ, քան միջամտության ամսաթվից հետո երկու աշխատանքային օրերի ընթացքում՝ բացառությամբ 77/93/ԵՏՀ հրահանգի 12 (1) (բ) հոդվածի խախտման դեպքի, եւ ցանկալի է, որ մերժում գրանցած միջամտության դեպքում ծանուցումն ապահովվի առավել արագ՝ բացառությամբ այդ Հրահանգի միայն 12 (1) (բ) հոդվածի խախտման՝

– պատասխանատվություն կրող սեփական միասնական կենտրոնական մարմնին,

- սեփական պատասխանատու համապատասխան պաշտոնական մարմիններին,
- սեփական համապատասխան մուտքի կետերին,
- անդամ պետությունների միասնական կենտրոնական մարմիններին՝ չհակասելով սույն Հրահանգի 4-րդ հոդվածի հատուկ դրույթներին,
- Հանձնաժողովին:

2. Անդամ պետության միասնական կենտրոնական մարմինը, այլ անդամ պետության կողմից միջամտության մասին ծանուցումն ստանալուն պես անմիջապես ապահովում է տեղեկատվության ուղարկվելը սեփական համապատասխան մուտքի կետերին:

### **Հոդված 3**

Միջամտության մասին ծանուցումը կատարվում է այնպիսի ձեւաթղթի վրա, որը համապատասխանում է Հավելվածում ներկայացված նմուշին, լրացվելով պատշաճորեն՝ այն փորձագետների եւ վերահսկողության ազգային մասնագետների համար նախատեսված ուղեցույցների հրահանգների համաձայն, ովքեր իրականացնում են իրենց աշխատանքները 77/93/ԵՏՀ հրահանգի 19 (ա) (6) հոդվածի երկրորդ պարբերությին համապատասխան:

### **Հոդված 4**

Չհակասելով 2 (1) հոդվածի չորրորդ պարբերության եւ տվյալ անդամ պետության պահանջով՝ Հանձնաժողովը կկրի միջամտության մասին ծանուցում տարածելու պատասխանատվությունը 77/93/ԵՏՀ հրահանգի 19 (ա) (6) հոդվածի առաջին պարբերությով սահմանված ցանցի ստեղծման աշխատանքները ծավալվելուն պես՝ ուղարկելով այլ անդամ պետությունների սույն Հրահանգի Հավելվածում ներկայացված նմուշին համապատասխան, պատշաճորեն լրացված ձեւաթուղթ:

## **Հոդված 5**

Սույն Հրահանգին առնչվող պարտավորությունները կատարելու նպատակով նախընտրելի է, որ անդամ պետություններն օգտագործեն Հանձնաժողովի կողմից ստեղծված ցանցը:

## **Հոդված 6**

Հանձնաժողովը, տվյալ անդամ պետության պահանջով եւ Հանձնաժողովի կողմից ստեղծված ցանցի շրջանակում, Բույսերի պաշտպանության եվրոպական եւ միջերկրածովյան կազմակերպությանն ուղարկում է միջամտության ձեւերը մանրամասնող ծանուցումը, ի պատասխան որի, անդամ պետությունները պարտավոր են ուղարկել միջամտության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ համաձայն այդ կազմակերպության հիմնադրման մասին Կոնվենցիայի: Հետեւաբար, Հանձնաժողովն ուղարկում է այդ կազմակերպությանը Հավելվածում ներկայացված նմուշին համապատասխանող, պատշաճորեն լրացված ձեւաթուղթ՝ բացառելով նմուշի 1, 2, 3, 15 (գ)-(է) եւ 17 կետերը:

## **Հոդված 7**

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգը կատարելու համար անհրաժեշտ օրենքներ, կանոնակարգեր եւ վարչական ակտեր ոչ ուշ, քան Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում դրա հրապարակումից 30 ամիս հետո: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Անդամ պետությունները, այդ դրույթները ընդունելիս, պետք է ապահովեն, որ դրանք հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով իրենց պաշտոնական հրապարակման պահին: Նման հղում կատարելու կարգն ընդունվում է անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ներպետական իրավունքի բոլոր այն դրույթները, որոնք նրանք ընդունում են սույն

Հրահանգով կարգավորվող ոլորտում: Հանձնաժողովը դրա մասին տեղեկացնում է մյուս անդամ պետություններին:

### **Հոդված 8**

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո քսաներորդ օրը:

Կատարված է Բրյուսելում, 1994 թվականի հունվարի 21-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Ռենե ՍԱՅՇԵՆ

Հանձնաժողովի անդամ

1) ՊՏ թիվ L 26, 31.01.1977թ., էջ 20:

2) ՊՏ թիվ L 303, 10.12.1993թ., էջ 19:

ՀԱՎԵԼՎԱԾ

3-րդ եւ 4-րդ հոդվածներով նախատեսված օրինակելի ձեւ

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐԻՑ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԱՆ ԿԱՄ  
ՎՆԱՍԱԿԱՐ ՕՐԳԱՆԻԶՄԻ ՄՈՒՏՔԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ  
ԾԱՆՈՒՑՈՒՄ**

1. ԲԵՌՆԱՌԱՔԻՉԸ

ա. Անունը՝

բ. Հասցեն՝

գ. Երկիրը՝

2. ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԳՈՐԾԸ

ա. Գործի համարը՝

անհրաժեշտ է հասցեագրել հաղորդագրությունը՝

բ. Անդամ պետությունները՝ գ.

ԲԿԲՊԵԿ/EPPO 3. ԲԵՌՆ ՍՏԱՑՈՂԸ

ա. Անունը՝

բ. Հասցեն՝

գ. Երկիրը՝

դ. Երկիրը +

ե. նպատակակետը՝

4. ա. Բույսերի պաշտպանության կազմակերպություն՝

բ. հասցեագրված՝

5. ա. Երկիրը +

բ. արտահանման վայրը՝

6. ա. Երկիրը +

բ. ծագման վայրը՝

7. ՓՈԽԱԴՐՈՒՄԸ ա. Փոխադրման ձեւը

բ. Փոխադրամիջոցը (փոխադրամիջոցները)

գ. Փոխադրամիջոցների տվյալները

8. Մուտքի կետ

9. ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ա. Փաստաթղթի տեսակը

բ. Փաստաթղթի համարը

գ. Երկիրը + դ. թողարկման վայրը՝

ե. թողարկման ամսաթիվը՝

10. ԲԵՌԱՆ՝ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ՀԱՏՎԱԾԻ  
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ա. Փաթեթի(փաթեթների)/կոնտեյների(կոնտեյներների) տեսակը՝

բ. Փաթեթի(փաթեթների)/կոնտեյների(կոնտեյներների) տարբերակիչ նշանը(նշանները)՝

գ. Փաթեթի(փաթեթների)/կոնտեյների(կոնտեյներների) թիվը՝

դ. Բոյս, բուսական արտադրանք կամ այլ պարագա՝

ե. Սպառման առարկայի դասը՝

11. ա. Բեռում առկա միավորների զուտ քաշը/ծավալը/քանակը՝

բ. Չափման միավորը՝

12. ա. Բեռան՝ միջամտության ենթարկված հատվածի միավորների զուտ քաշը/ծավալը/քանակը՝

բ. Չափման միավորը՝

13. ա. Վարակված հատվածի միավորների զուտ քաշը/ծավալը/քանակը՝

բ. Չափման միավորը՝

14. ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌԸ (ՊԱՏՃԱՌՆԵՐԸ)



ա. Պատճառը (պատճառները)՝

բ. Վնասակար օրգանիզմի գիտական անվանումը՝

գ. Վարակի տարածման ծավալը՝

15. ՁԵՌՆԱՐԿՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ա. Միջոցները՝

բ. Միջոցների ծավալը՝

ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԿԱՐԱՆՏԻՆԸ

գ. Մեկնարկի ամսաթիվը՝

դ. Նախատեսվող վերջնաժամկետը՝

ե. Փաստացի վերջնաժամկետը՝

զ. Երկիրը +՝

է. Կարանտինի կիրառման վայրը՝

16. ԱԶԱՏ ՏԵՔՍՏ

17. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ա. Վայրը/ստուգման կետը՝

բ. Պաշտոնական ծառայությունը՝

գ. Ամսաթիվը՝

18. ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՂԱՐԿՈՂԸ

ա. Պաշտոնական ծառայությունը +՝

բ. Պաշտոնական կնիքը՝

գ. Գործի համար պատասխանատու անձը՝

դ. Ամսաթիվը՝